№ 142 ԿԻՐԱԿԻ ՕՈՒԼԻՍԻ 1 — 1901 — ԿԻՐԱԿԻ ՕՈՒԼԻՍԻ 1 № 142

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

Ցունիսի 29-ին, երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ ԷՄԻՆԵԱՆ,

որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին եւ ծանօթներին հանգուցեալի զաւակները: Ամբիծքը՝ երկուշաբթի յուլիսի 2-ին, երեկոյեան ժամի 7½-ին: Ցուղարկաւորութիւնը՝ հանգուցեալի տանից, որ գտնվում է Միքայէլեան փողոցում, № 160, Թանդոյեան ս. Աստուածածնի եկեղեցին՝ երեքշաբթի, յուլիսի 3-ին: 1—2

Արշակ, Տիգրան, Յովսէփ, Ալէքսանդր, Աննա, Արամ, Դարիա եւ Մարթա Թադէոսեանները խորին ցաւով յայտնում են բարեկամներին եւ ծանօթներին՝ առաջիններին իրանց թանգագին հօր եւ վերջիններին սկեսրայրի,

ՄԵԼՔՈՆ ԹԱԴԷՈՍԵԱՆԻ

մահը: Ցուղարկաւորութիւնը այսօր, յուլիսի 1-ին, առաւօտեան 10 ժամին, Պետխաչինակայա փողոց № 1-ից դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Մատենագրութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալիայում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

LII

«Ատելութիւնը յաճախ թարսած սէր է», ասում է մի տեղ Կարլէյլ:

Կան մարդատեացներ, որոնք այդ ատելութիւնն են տածում դէպի մարդիկ, եւ ազգատեացներ, որոնք այդպէս են ատում իրանց ազգը:

Այդպիսի ազգատեացներից մէկը, որի ատելութեան տակ հազարապատիկ աւելի զօրեղ սէր է թագնված դէպի հայերը, քան բոլոր թթու ազգասէրների սրտում, մօտաւորապէս այսպէս է բնորոշում հայերին մի մանաւոր նամակում:

Բոլոր ազգերը, որոնք հասել են որոշ մեծութեան, հզօրութեան եւ հռչակի, ունեցել են միշտ մի աբսօլիւտ, մի գաղափար, որ անկասկածելի է եղել նրանց աչքում եւ որին նրանք ծառայել են անձնազոհ կերպով, լինի այդ աբսօլիւտը մի բռնակալական իշխանութիւն, մի մոլեռանդ կրօն, թէ մի վսեմ աշխարհահայեացք:

Որպէս զի մի ազգ զօրանայ եւ հանի փառաւոր սովորել են իրանց կերակրի ժամին. նրանք հազարներով պատում են սալայատակը գոյնզգոյն երամով, մնչում են եւ պտոյտ գործում ջահիլ օրիորդների շուրջը, որոնք ձգում են նրանց եգիպտացորենի հատիկներ: Այս աղաւնիներն էլ, ինչպէս ամեն ինչ, որ կայ ս. Մարկոսի հրապարակում, իրանց պատմութիւնն ունեն, որ կապված է Վենետիկի պատմութեան հետ:

Հանրապետութեան փառքի օրերում սովորութիւն կար Ծաղկազարդի տօնին ս. Մարկոս եկեղեցուց, պատարագի ընթացքում, բաց թողնել աղաւնիներ, որոնք բարձրանում շարվում էին դօժերի պալատի պատերի վրա: Նրանք այնուհետեւ դառնում էին անժատելի եւ կերակրվում էին պետութեան հաշիւով: Այս աղաւնիները՝ Վենետիկի փառքին մասնակից հին աղաւնիների ձագերն են. իրանց նախորդների պէս՝ սրանք էլ են թառում հինաւուրց պալատների վրա, բայց էլ նրանց պէս չեն կերակրվում պետական հաշիւով: Ինչպէս ամեն ինչ, նոյնպէս եւ այս աղաւնիները դարձել են հարուստ զբօսասէրների սեփականութիւն եւ կերակրվում են նրանց ձեռքով, նրանց հաճոյքի համար: Դարեր է՝ ինչ այդ աղաւնիները սովորել են կերակուր վերցնել մարդկային ձեռներից: Զարմանալի է. գեղասէր կանայք կարողացել են թռչունների այդ սովորութիւնն անգամ շահագործել աւելի գեղեցիկ երեւալու համար. ջահիլ օրիորդները գնում են փոքրիկ թղթեայ պարկերի մէջ առատ եգիպտացորեն, ապա ցանում են հատիկները իրանց գլխի, ուսերի եւ բազուկների վրա, կամ բռնում են ափերի մէջ եւ այդպէս մնում են անշարժ կանգնած. աղաւնիները երամով թափվում են եւ շարվում նրանց գլխի, ուսերի, կռների վրա, իսկ քնքոյշ սեռի երկրպագուները, ծաղկի, պէտք է, որ նրա բոլոր անդամները սերտ շաղկապված լինեն այդպիսի անպայման գաղափարով, ունենան մի «սրբութիւն սրբոց», բարձր բոլոր կասկածներից, բոլոր ոտնձգութիւններից, բոլոր դաւաճանութիւններից:

Այդպիսի աբսօլիւտ, այդպիսի սրբութիւն սրբոց հայերը երբէք չեն ունեցել, եւ այդ է պատճառը, որ նրանք մնացել են միշտ ողորմելի ազգ, չնչին մեծութիւն, գրեթէ ոչնչութիւն, չը նայելով իրանց բոլոր ընդունակութիւններին, որոնք այնքան փայլուն կերպով արտայայտվում են, երբ հայը, ընկնելով օտար միջավայրի մէջ, դառնում է մի որ եւ է մեքենակազմի անիւ, զսպանակ: Այդտեղ հայը գտնում է պատրաստ աբսօլիւտ եւ իր ոյժերը ծառայեցնում է այդ աբսօլիւտին: Տանը նա չունի այդպիսի աբսօլիւտ եւ նրա ոյժերը կորչում են իզուր, այնպէս, ինչպէս զուր կը կորչեն մի գործարանի բոլոր անիւների չարժումները, եթէ միաւորիչ փոկը չէ միացնում եւ մի գերագոյն ձեռք չէ ներդաշնակում նրանց:

Զը գիտեմ, ինչպէս ձեր կարծիքով, բայց իմ համոզմունքով՝ հազար անգամ իրաւունք ունի այդ ազգատեացը:

Ի՞նչ աբսօլիւտ կարող են ունենալ այժմ հայերը, բացի այն գրականութիւնից, որ իրանց հոգու արտայայտութիւնն է եւ իրանց ինքնուրոյն բարոյական գոյութեան միակ գրականը:

Եւ սակայն ինչպէս է վերաբերվում այժմ մեր հասարակութիւնը դէպի այդ գրականութիւնը, ինչպէս է վերաբերվում նա դէպի այն լեզուն, որ գործիք է ծառայում այդ գրականութեան համար:

Գտէք մեր շուրջը մի ժողովուրդ, որ հայի պէս վերաբերվի իր լեզուին: Վրացին, թուրքը, աւօրին՝ գիտեն իրանց լեզուն, խօսում են իրանց լեզուով, բայց մենք հայերս, որ քաղաքակրթված էինք դեռ այն ժամանակ, երբ այժմեան քաղաքակրթված ազգերից շատերը վայրենիների նման թափառում էին անտառներում, մենք, որ սրանից մէկ ու կէս հազարամեակ առաջ թարգմանել ենք Աստուածաշունչը այնպէս, որ մեր թարգմանութիւնը համարվում է բոլոր թարգմանութիւնների թանձր թէ անծանօթ, նրանց վրա են ուղղում լուսանկարչական գործիքները:

Գոյնզգոյն թռչունների եւ պճնված կանանց այս գրաւիչ պատկերի շուրջը, ինչպէս սեւ ետերուն բծեր, շարժվում են բազմաթիւ վենետիկցի աղքատ երեխաներ, ոտաբոբիկ, գլխաբաց, զգզված, պապիրոսը բերաններին, խեղճ ու կայտառ միաժամանակ. սրանք էլ վենետիկեան գաւրօշներն են. նրանք իրար հրհրում, վազվզում են՝ իրանց համար սովորական դարձած այս ճոխ պատկերի շուրջը եւ կազմում են մի տեսակ տխուր օղակ, որ սղմում է փարթամութիւնը իր սառը գրկում:

Հրապարակի որ կողմն էլ նայելու լինես՝ աչքիդ ներկայանում են յունական ոճի սիւներ, հոյակապ կամարներ, քանդակներ, մօզաիկներ, արձաններ եւ այս բոլորը սպիտակ մարմարից, որին հնութեան մուգ գոյնը տուել է մի տեսակ պատկառանք ազդող վսեմ տեսք:

Ս. Մարկոսի տաճարը, ինչպէս ճիշդ նկատել է Տէնը, «մի տեսակ քրիստոնէական մզկիթ է յիշեցնում». ճարտարապետութեան մի զարմանալի խառնուրդ է իշխում այս զարմանալի շէնքի բոլոր մասերում թէ դրսից եւ թէ ներսից: Իշխողը բիւզանդա-արաբական ստիլն է, բայց նրան խառնվել է գոթականը մի այնպիսի արուեստով, որ այլ եւս դժուար է որոշել թէ ո՞ւր է վերջանում մէկը եւ սկսվում միւսը:

Շէնքի գլխաւոր ճակատը նախշած է՝ որպէս մի խաղալիք. գլխաւոր մուտքի կամարներից վեր տարածվող անօրինակ տերրասի վրա բարձրանում են մի շարք այլ կամարներ, գոյնզգոյն, մեծ ու փոքր, եւ նրանց վրա շարված են ոսկեթեւ հրեշտակներ, որոնք արդարութեան կշիռը բռնած ձեռներին, ակնապիշ նայում են դէպի վեր, դէպի Աստուածածնի ոսկեզօծ արձանը: Այս արձանախմբից դէպի աջ ու ձախ շարված են փոքրիկ ոսկեզօծ կաթուղիկէներ, որոնք ծածկում են իրանց հովանու տակ այլ արձաններ կամ արձանախմբեր: Մայր կամարի ճակատին թեւաւորված ոսկէ առիւծն է իր թաթերի տակ պահում ոսկէ աւետարանը. նրանից ներքեւ չորս բրոնզէ ոսկեզօծ ձիարձաններ բնական մեծութեամբ ասես թափով սաւառնում են օդի մէջ: Եւ այս բոլոր ճարտարարուեստ քանդակներով եզերված կամարները, այս արձանները, կաթուղիկէները, խաչերը՝ վերեւում կազմում են մարմարէ եւ ոսկէ ալիքներ, իրանց ելեւէջում քարացած: Ներքեւում, հինգ դռգաձեւ կամարների տակ, հինգ դռների շուրջը, սիւների մի անտառ կայ, մարմարեայ, գրանիտեայ, պորփիւրի զանազան գոյներով, սպիտակ, կարմիր, կանաչ, բծաւոր, շարիշար, իրար կողքի, իրար վրա յունական խոյակներով, յոնական՝ գալարուն, կորինթեան՝ գաւթնիազարդ: Ընդհանուր պատկերը լրացնում են արտաքին պատերի վրա փռված բազմաթիւ նկարները հին եւ նոր կտակարանից ու վարք սրբոցից:

Այս շէնքին նայելով կարելի է կարծել, թէ բոլոր այն երկիրները, որոնք երբ եւ իցէ Վենետիկի ընչաքաղց հանրապետութեան իշխանութիւնը տեսել են, ուղարկել են իրանց հանճարի արտադրութիւնը այս զարմանալի շէնքը զարդարելու համար, կամ, աւելի ճիշդ, հարուստ կողոպուտներից այսպիսի խոշոր բաժին հանելով Աստուծու տաճարի համար, գաժերը կարծես կամեցել են երկնքի ներողամտութիւնը վաստակել իրանց կառավարութեան անիրաւութիւնների համար: Աշխարհի գուցէ միակ եկեղեցին է այս, ուր աւազակութիւնն ու կողոպուտը սրբազործված է բացարձակօրէն: Նոյն իսկ այն սուրբը՝ ս. Մարկոսը, որի անուանն է նուիրած այս տաճարը, գուցէ, մենք ամաչում ենք մեր լեզուից, մենք արհամարհում ենք մեր լեզուն, արհամարհում ենք եւ այն ժամանակ, երբ գիտենք որ եւ է եւրոպական լեզու, եւ այն ժամանակ, երբ ոչ մի լեզու, ոչ եւրոպական, ոչ ասիական, կարգին չը գիտենք:

Զիմանալով եւ արհամարհելով մեր լեզուն, մենք բնականաբար չենք հետաքրքրվում եւ մեր գրականութեամբ, եւ եթէ մի անկիւն ենք շնորհում հայ գրքին, հայ լրագրին մեր տանը, այդ լինում է առհասարակ «մոխրատիեկի» անկիւնը:

Մոխիրների մէջ, գզգզված ու կեղտոտ նըստած է մեր ողորմելի գրականութիւնը եւ չը կայ մի մարգարէ, որ սրտեր վառող լեզուով կարողանար հասկացնել մեզ, որ այդ մոխրատիեկի մէջ է մեր փրկութիւնը: Զը կայ այդպիսի մարգարէ եւ նա մնում է մոխիրների մէջ, ու մենք, զուրկ մի աբսօլիւտից, տարվում ենք հակառակ կողմեր կենտրոնախոյս ձգտումներից եւ հետզհետէ մանրանում, թուլանում ու ջլատվում, գետնի մէջ թաղելով այն տաղանդը, որ երկնքից մեզ տուած է շահեցնելու համար:

Տ. Ց.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

I

„Chrétiens et Musulmans“, par Ludovic de Contenson, avec une lettre—préface de M. Jules Lemaître.

Պ. Կոնտանսոնի «Քրիստոնեաներ եւ Միւսիւլմաններ» վերնագիրը կրող նոր գիրքը չահագրգիռ է մանաւանդ մեզի՝ հայերս համար, որովհետեւ անոր մեծագոյն մասը նուիրված է մեր ցեղին ու մեր հայրենիքին ուսումնասիրութեան:

Արտասահմանի հայ մամուլը՝ այս գեղեցիկ երկասիրութիւնը հատակրութեամբ ողջունեց ու Վառնայի «Իրաւունքը» թարգմանաբար իր ընթերցողներուն ներկայացնելու վրա է գրքին այն մասերը, որ կը վերաբերին մեզի: Պէտք է շնորհակալ ըլլանք պ. Լուդովիկ դը Կոնտանսոնի՝ այն ազնիւ, բեղուն ու խղճամիտ ճիգին համար, զոր կատարած է՝ մեր ազգը Ֆրանսային ճանչցնելու, հետեւաբար սիրցնելու նպատակով:

ՌՈՒԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՑՈՒՄ

(Ուղեւորի թռուցիկ տպաւորութիւններ)

VI

Օտարականը Վենետիկ հասնելուց յետոյ անմիջապէս ս. Մարկոսի հրապարակն է վազում: Տէնն իր իտալական նամակներում ամենագողտրիկ տողերն է նուիրել գեղարուեստական այդ գոհարին. Թէօֆիլ Գոտիէն նոյնպէս. Բայրոնն այնտեղ է թափառել ամիսներով եւ հաւանականաբար այնտեղ կազմել Չայլդ-Հարոլդի մի մասը եւ իր «Մարինո-Ֆալիէրոն». ով գիտէ, գուցէ Շէքսպիրի «Վենետիկի վաճառականն» այդտեղ է ծնունդ առել հանճարեղ բանաստեղծի գլխում: Եւ ճշմարիտ, այդ հրապարակն իր շրջապատով, իր եկեղեցիով, դքսական պալատով՝ ընդունակ է զգայուն մի սրտում ամենաբանաստեղծական յուշեր յարուցանել եւ անցեալը, հին օրերի պառաւած փառքերը երազող հոգիներին պատկերների եւ խոհերի ալիքներում օրօրել:

Եթէ գիշերները ս. Մարկոսի հրապարակը ցնորական է ու գիւթիչ, ցերեկն էլ արեւի վառ շողերի տակ նա մի այլ գրաւչութիւն, այլ հետաքրքրութիւն է ներկայացնում: Առաւօտեան ժամի 9-ից հրապարակը լցվում է հաւարեա բացառապէս օտարականներով, որոնք մեծ մասամբ գերմանացիներ եւ անգլիացիներ են, խումբ-խումբ ջահիլ օրիորդների հետ. վերջինների ամենահետաքրքիր զուարճութիւնն ու զբաղմունքն այդ ժամին ս. Մարկոսի աղաւնիներին կերակրելն է: Այս թռչունները

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ. դը Կոնտանսօն մէկէ աւելի անգամ ճամբորդած է Թիւրքիա. 1892-ին ու 1896-ին, ջարդերէն անմիջապէս ետք։ Գրքին ընթերցումէն այնպէս հետեւցուցի թէ հեղինակը՝ ոչ միայն թուրք աշխարհը իր մէջ ապրող ցեղերով եւ ազգաբնակութիւններով լաւ ճանչցած է, այլ եւ բոլորովին անծանօթ չէ թուրք լեզուին։

Ջարդերուն յաջորդ օրն իսկ կատարված՝ ինչ արտում, ցաւագին ու մահասարսուռ ճամբորդութիւն մը եղած ըլլալու է պ. դը Կոնտանսօնի ճամբորդութիւնը։ Իր անցքին վրա պատահած ըլլալու է տակաւին երէկ չէն ու բազմամարդ եւ զուարթ ու արգաւանդ երկրի մը արտում ու քստմնելի աւերակին ու արհաւիրքներուն մէջ, ջլատված, ջախջախված, իր միսին ու իր մտածումին մէջ նահատակված մարդկութեան մը, որուն պակուցանող դժբաղդութեան ու անչափելի ցաւին առջեւ երկու ուժով զգացում միայն կարելի է ունենալ՝ կարեկցութիւն եւ զայրոյթ։ Կարեկցութիւն՝ զոհերուն համար ու զայրոյթ՝ դահիճներուն համար։

Պ. դը Կոնտանսօնի գիրքը այս երկու զգացումները կը պարունակէ բարձր աստիճանով մը։ Իր գործը ոչ միայն գթութեան, այլ եւ արդարութեան ալ գործ մըն է։

«Քրիստոնեաներ եւ Մուսիլմաններ», հակառակ իր անվիճելի արժէքին, բոլորովին զուրկ չէ մէկ երկու արատներէ, որոնք, պէտք է խոստովանիլ, գրեթէ կանայատանան գրքին ամբողջութեան մէջ։

Պ. դը Կոնտանսօն Եդեսիայի կոտորածներու վրա խօսելով կաւելցնէ. «Կոտորված կաթոլիկ հայերու թիւը մեծ եղած չէ։ Պաշտօնական հրամանը միայն լուսաւորչականներու մասին էր։ Բայց կաթոլիկ քահանաները հերձուածողներու մէջ ինչ անսահման որս մը պիտի կարողանային ընել, եթէ քիչ մը աւելի ճարպիկութիւն ցոյց տուած ըլլային։ Այս դէպքերէն ի վեր, հազարներով է, որ ինքնաբերաբար մեզի դիմած են հաւատափոխութեան համար, պաշտպանութիւն գտնելու նպատակով։ Եթէ կաթոլիկ եւ ֆրանսական ազդեցութեան աւելի ուժ տուած ըլլայինք, ինչ առիթ մը պիտի ըլլար ատիկա, մեզի կապելու յաճախորդներու խումբ մը՝ որ գրեթէ ամբողջովին անգլիացիներուն եւ գերմանացիներուն ձեռքը անցած է»։

83-րդ էջին մէջ կը գտնենք նմանապէս. «Ինչպէս շրջակայքը, նոյնպէս այստեղ սակայն, հերձուածող ընտանիքներու շատեր, ֆրանսական պաշտպանութիւն ստանալու համար, փափաք յայտնած էին կաթոլիկութիւն ընդունել։ Բայց մեր ամենէն մօտիկ միսիոնարները Եդեսիա եւ Այնթապ են. Պէրէճիքի մէջ տեղացի կաթոլիկ քահանայ մը միայն կայ։ Գալով մեր հիւպատոսներուն՝ միշտ գամված իրենց պաշտօնատեղին, հակառակ իրենց փափաքին, չեն կրնար ճամբորդել անգլիական գործակատարներուն պէս, ոչ ալ այցելել առանց իրենց տեղէն շարժելու՝ այն բնակչութիւններուն, որոնք մեր ազդեցութեան տակ մնալ կը ղձան»։

Ինչպէս կը տեսնաք, պ. դը Կոնտանսօն ֆրանսացիներու այն դասակարգին կը վերաբերի, որ իր մտքի սովորութիւններով, իր խորհելու եղանակով աւելի աւանդական քան նոր, Ֆրանսային կապված է։ Երբ «ֆրանսական ազդեցութիւն» կըսէ՝ պէտք է հասկնալ կաթոլիկ կրօնքի տարածում։

Ֆրանսայի պահպանողականը Հայաստանի մէջ հայ կաթոլիկներու հանդիպելով՝ կը հետեւցնէ թէ այդ հաւատափոխութիւնները կաթոլիկ միսիոնարներու գործն են։ Պէտք է սակայն իրեն հաւատալ թէ անոնք ծնունդ առած են մէկ երկու դար առաջ, մասնաւոր պայմաններու տակ, կարգ մը բարդ պատճառներէ։ Իսկ եթէ կաթոլիկ կղերը, այս վերջին տեսներս, յաջողեցաւ իր շուրջը հաւաքել քանի մը համակիրներ, անոնք ալ խեղճեր են որ աւելի ստամոքսէ քան հոգեկան պէտքէ մը մղուած դիմեցին իրենց։ Ֆրանսական ազդեցութեան խնդրին ամեն երեսները շօշափելու համար հարկ է աւելցնել որ, եթէ կրօնական տեսակէտը հեռացնենք, անիկա արդէն գոյութիւն ունի մեր երկրին մէջ։ Բաւական է ակնարկ մը նետել թիւրքահայ գրականութեան վրա։ XIX-րդ դարուն երկրորդ կէսէն սկսեալ մեր գրագէտներն ու խորհողները քայլ առ քայլ հետեւած են Ֆրանսայի գրական շարժումին։ Մինչեւ իսկ ունեցանք մեր décadent-ներն ու մեր symboliste-ները։

Այդպէս ուրեմն, մենք Ֆրանսայի իմացական, բարոյական տիրապետութեան տակ ենք։ Ո՞րոնք են անոր ազդակները, տարածիչները։ Կաթոլիկ միսիոնարները։ Կաթոլիկ միսիոնարները նոյն իսկ գոյութիւնը կուրանան, եթէ իրենց ատիկա յաջողի, անոնց՝ որ ֆրանսական մտածումը, ֆրանսական ազդեցութիւնը բերին մեր մէջ, ինչպէս Հիւգո, Դիդրո, Վոլտէր, Ռուսօ, Լամարտին, Ռընան, Տէն, ժամանակակիցներէն՝ Ֆլէմանսօ Միռբо, Անատոլ Ֆրանս, Զոլա, եւ այլն եւ նմանապէս քանի մը ուրիշ մեծ գրագէտներ՝ որ, այսօր, առաջիններուն հակառակ բանակի մը մէջ են։

Թիւրքահայ երիտասարդները՝ այսօր իրենց բարձրագոյն կրթութիւնը առնելու համար Պարիզ է որ կը վազեն։ Ահաւասիկ ֆրանսական ազդեցութեան իսկական տարածիչները։ Օր մը երբ անոնք դառնան իրենց դժբաղդ երկիրը, իրենց հայրենակիցներուն պիտի պատմեն մեծ, վսեմ սկզբունքներու Ֆրանսային փառքը։

Տիգրան

II

Ա. Աղաբաբեան. «Հալաբարցոց մտաւոր կեանքը». 43 եր. գ. 20 կ. Թիֆլիս 1901 թ.

Մենք գիտենք, որ հալաբարցիների մտաւոր կեանքը մի փայլուն բան չէ, բայց անկասկած է, որ պ. Աղաբաբեան զրպարտել է հալաբարցիներին իր գրքոյկով։

Ժողովրդական դէկադէնտութեան ամենաողորմելի թափթփուքներ, փողոցային ամենաանվայել բթախօսութիւններ ու տափակ հայհոյանքներ, եւ նրանց մէջ կցկտուր, անկապ, անսիստեմ, առանց բացատրութեան, առանց լուսաբանութեան մի քանի հետաքրքրական հատուածներ, տողեր, դարձուածքներ, խօսքեր,—ահա պ. Աղաբաբեանի գրքոյկի բովանդակութիւնը։

Ո՞ւմ կարող է օգուտ բերել այդպիսի գրքոյկը,—թերեւս միմիայն մեր դէկադէնտներին, որոնք կարող են իրանց արձակ եւ ոտանաւոր բանաստեղծութիւնների համար բնաբան ընդունել պ. Աղաբաբեանի դատած այսպիսի մարգարիտները։

1) Այն, ցվայն, կինտրիկօնց,
Հացն ուտես վեչերկամ,
Դանակ, չանգլով սալֆետկով։
2) Մաշինա, մաշինա,
Խփեմ սանն բաշինա։
3) Պապիրոսի պաչկումը.
Խփեմ քու. քօռ աչքումը։

Անվայել կտորներից, որոնց մէջ ընդհանրապէս նոյն իսկ ոչ միտք կայ, ոչ մի ընորոշ բան, անյարմար ենք համարում օրինակներ բերել։

III

Նուէր մանուկներին. Լ. Շելգունովա. «Արջի պատմութիւնը». Զասօդիմսկի. «Գայլը». 43 եր. գ. 15 կ. Թիֆլիս 1901 թ.

Թէ Շելգունովայի, թէ Զասօդիմսկու մանկական պատմածքները, որոնց հայերէն թարգմանութիւնները մասին են տպված, կարող են առողջ նիւթ ծառայել մանկական ընթերցանութեան համար։

Երկուսի թարգմանութիւններն էլ արված են պարզ եւ կենդանի լեզուով։ Սրբագրութիւնը, որ շատ մեծ նշանակութիւն ունի մանկական գրքերում, լաւ է արված միայն առաջին պատմածքում։ Պատկերները աջող չեն։

Տ. Ե.

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) «Պատմութիւն Հայոց» Հ. Համազասպ Թերզիմանեանի. պատկերազարդ. 102 եր. գ. 1 ֆր. Վենետիկ. Ս. Ղազար. 1901 թ. 2) Հ. Ս. Վ. Սարեան. «Մագնիսական քուն». (Hypnotisme), 165 եր. գ. 1 ֆրանկ. Վենետիկ Ս. Ղազար 1901 թ. 3) Г. Ананьевъ. „Караногайскія народныя историческія преданія“ 1899 г. 4) Сборникъ матеріаловъ по изученію полевого хозяйства на Кавказѣ. вып. I. Сѣверо-западная часть кубанской области. Тифлисъ 1900 г.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Քաղաքացիական ինժենէրների ընկերութեան կովկասեան մասնախումբը՝ այն բոլոր անձանց, որոնք ցանկանում են ցուցադրել էքսպօնատներ կովկասեան գիւղատնտեսական եւ արդիւնաբերական ցուցահանդէսի ճարտարապետական բաժնում, խնդրում է դիմել տեղեկութիւնների, բացատրութիւնների եւ խորհուրդների համար այդ մասնախմբի ներկայացուցիչներին՝ Գ. Ա. Սարգսեանին (Սօլոլակ, Բեհբութեան փողոց, տ. № 58) եւ ճարտարապետ Ա. Ս. Բօգոյակիին (Գօլովինսկի եւ Կրուզէնշտերնեան փողոցների անկիւն, տ. Դօրբժանսկայի)։ Տեսնել կարելի է՝ Բօգոյակիին ցերեկվայ 2—3 ժ., Սարգսեանին՝ ցերեկվայ 2—4 ժ. եւ, բացի այդ, երկուսին էլ՝ ցուցահանդէսում ամեն օր երեկոյեան 6—7 ժամին։

—

Հարկային տեսուչ Լ. Ղուկասեան հաղորդում է մեզ. «Աչքի առաջ ունենալով, որ Ախալքալաքի գաւառի գիւղացիները որոնում են աշխատանքի տեղեր, ես հետաքրքրվեցի, թէ որքան մշակի կարօտութիւն ունի Վարթալինայի Ուզելի կալուածքը, եւ ստացայ հետեւեալ տեղեկութիւնները։ Կալուածքին հարկաւոր են հարիւր մշակ, որոնք կը ստանան. 1) այգեհողերը հերկելու համար քառակուսի սաժենին 10—20 կոպէկ, նայած հողի յատկութեան, 2) այգեհողերը բրելու համար օրավարձով 50 կոպէկ, կամ իւրաքանչիւր դեսեատինին 25—30 կոպէկ 3) ուրիշ աշխատանքներ 50—65 կոպէկ օրավարձով։ Մշակները կը ստանան ընակարան։ Այդ հարիւր մշակը կարող են զբաղմունք ունենալ ամբողջ տարին։ Աշնան եւ գարնան կը պահանջվի աւելի բանւոր։ Ցանկալի է, որ աշխատանք ուզողները առիթը ձեռքից չը թողնեն եւ օգտվեն ներկայ դէպքից։ Մշակները պէտք է աշխատեն այժմեանից իսկ գնալ դէպի մշակութեան տեղը։ Նրանք պէտք է ուղղվեն երկաթուղու Կանկա կայարանը գնալու Մուխրան կալուածքը, որ գտնվում է կայարանից 8 վերստ հեռաւորութեան վրա։

—

«Курьеръ» հաղորդում է, որ Գօրկիի առողջութիւնը դէպի լաւն է գնում։ Գօրկիի այժմ զբաղված է մի դրամա գրելով։ Նրա «Трое» վէպի շարունակութիւնը, «Жизнь» ամսագրի դադարման պատճառով, տպվելու է գաւառական պարբերական հրատարակութիւններից մէկում։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ երկրագործութեան մինիստրութիւնը վճռել է շահագործել Մացեստ գետի ափին՝ Սօչնից 10 վերստի վրա գտնվող հանքային ջրերը։

—

զարգված է արեւելքից։ Երկու վենետիկցի վաճառականներ 828 թ. Ալէքսանդրիայի ս. Մարկոս եկեղեցուց գողացել են յիշեալ աւետարանիչի մարմինը եւ, մահմեդականներին խաբելու համար, այն կողովը, ուր դրված է եղել գողացված աճիւնը, պատել են խոզի մսով ու թարմ ոստերով եւ այդպիսով աջողացրել են Վենետիկ հասցնել։ Ահա այսպիսի գողութեամբ ձեռք բերված սուրբը դառնում է այնուհետեւ կողոպուտով ապրող այդ պետութեան պատրոն։ Աւելի հետաքրքիրն այն է, որ եկեղեցու դրսի ճակատին, հէնց հրապարակի վրա, նկարված են այդ «սրբազան» գողութեան բոլոր տեսարանները։ Չը գիտեմ միայն, կաթոլիկ եկեղեցին այդ վաճառականներին սրբերի դասը դասել է, թէ ոչ։

Դժուար է ճշդութեամբ ասել, թէ այս շինութեան որ սիւնը, որ մնացորդը՝ որտեղից է բերված, բայց այսքանը յայտնի է, որ գոյնզգոյն միակտուր մարմարէ սիւներից 590-ը բերված են Կ. Պոլսից եւ Ցունաստանից զանազան ժամանակներում։ Հետաքրքիր է չորս բրօնզէ ոսկեզօծ ձիարձանների պատմութիւնը. 1205-ին այդ արձանները տեղափոխվել են Վենետիկ Կ. Պոլսից եւ տեղաւորվել են տաճարի մուտքի ճակատին. գողից գողանալու յայտնի առածն արդարացնելու համար՝ Նապոլէօն I 1797 թ-ին, Վենետիկի այլ կողոպուտների հետ, այդ արձաններն էլ տեղափոխեց Պարիզ եւ միայն 1815 թ-ին, Նապոլէօնի անկումից յետոյ, բեստավրացիան կրկին յետ տուեց Վենետիկին։ Կ. Պոլսից է բերված նաեւ տաճարի հարաւային մի անկիւնում պատի մէջ տեղաւորված մարմարէ արձանախումբը, որ ներկայացնում է չորս արեւելեան զինուորներ, երկար զգեստներով,—բիրտ ու անճաշակ մի գործ, որ չը գիտես ինչու, կարծվում է, թէ հայ զինուորներ են։ Թէ որ աստիճան մեծ է եղել այս եկեղեցու պատերին շարունակ նոր անոր զարդեր կպցնելու տենչը, ցոյց է տալիս հէնց այդ արձանախումբը, որ կամեցել են անպատճառ մի տեղ տեսնել եւ երկաթներով ամրացրել են մի անկիւնին բաւական անհաստատ կերպով։ Հարաւային պատի տակ եւ դքսական պալատի մուտքի դէմ ու դէմ բարձրանում են մարմարէ երկու քառակուսի սիւներ, որոնք երկար դարեր կախաղանի են ծառայել. այդ սիւներն էլ արեւելքից են բերված, ինչպէս նաեւ ծովափին կանգնած գրանիտեայ երկու հսկայական կօլօնները։ Մի խօսքով այս եկեղեցու շուրջը չը կայ մի սիւն, մի զարդ, մի նկար, որ որ եւ է ձեւով կողոպուտ չը յիշեցնէ, եւ այդ բոլորը սրբագործված է տաճարի հովանու տակ։ Գեղեցիկ է եկեղեցու կտուրը, ուր հինգ անհաւասար մեծութեամբ գմբէթներ բռնում են կենտրօնը, իսկ նրանց շուրջը, չորս կողմի պատերի վրա, որպէս մի սիրուն պար, շարված են մանր գոթական կամուղիկէները, որոնց շարքի մէջ սրբերի ու հրեշտակների ոսկին ու մարմարը մրցում են իրար հետ։

Զարմանալի է եղել Վենետիկի հանրապետութիւնը. դքսական պալատն ու եկեղեցին կպած՝ գրկախառնված են իրար եւ երկուսի վրա հսկում է թեւաւոր առիւծը, իր թաթերի տակ պահպանելով բաց աւետարանը։ Ի՞նչ գլխիվայր, ինչ տարօրինակ բացատրութիւն Մեծ Մարդասէրի վարդապետութեան։ Հեղութեան, սիրոյ, պասսիվ առաքինութեան քարոզը դրված է առիւծի ուժեղ ճիրանների պաշտպանութեան տակ. կարծէք այդ վարդապետութեան հեղինակը Գողգոթայի արիւնոտ փայտից չէ կախվել, այլ սուրը ճոճելով դուրս է եկել բոցոտ Արաբիայի արգանդից։ Որ կողմն էլ նայելու լինէք այստեղ, կը տեսնէք, որ կրօնն ու ոյժը ընթանում են ձեռք ձեռքի տուած. առիւծ ու աւետարան, մարտիրոսներ ու աշխարհակալ զօժեր, կոտորած, արիւն ու խաչելութիւն, յափշտակիչներ ու մարգարէներ, առաքեալներ ու աւազակներ իրար խառնված, կողք կողքի բարեկամաբար շարված են տաճարի ու պալատների պատերի վրա։ Կրօնաազնւապետական այդ օլիգարխիան, որ հանրապետութիւն անունն է կրել՝ ասես ժողովուրդը հեգնելու համար, հին Հռոմի անողոք խստասրտութեան, նրա գոռոզ եսասիրութեան վրա ձգել է մի կրօնական քող եւ ամբողջ դարեր Միջերկրականի ժողովուրդներից կողոպտել է այն՝ ինչ խուսափած է եղել Հռոմից։

Ս. Մարկոսի հրապարակի հիւսիսումն է գտնվում Վենետիկի հռչակաւոր ժամացոյցի աշտարակը, շինված 1496 թ.։ Այս չէնքի վերին տերրասում երկու բրօնզէ Վուլկաններ, մարդու բնական մեծութեամբ, իւրաքանչիւր ժամին մեծ մուրճերով հարուածում են մի ահագին զանգի վրա եւ նրա խլացուցիչ զողանջիւնով ժամերն են յայտնում ամբողջ Վենետիկին։

—

Այս հրապարակի մասին գրելիս մտքովս անգամ չէր անցնում, թէ առիթ կունենամ հայ անուններ յիշատակել նկարագրութեանս մէջ, բայց աշխարհի որ ծայրում եւ երբ հայ չի յայտնվել գէթ մի անգամ։ Եկեղեցու արտաքին մարմարէ սիւները դիտողը կը նկատի հայերէն անճոռնի, ծուռ ու մուռ տառեր քարի ողորկութեան վրա փորագրված. կարդացվում են՝ Խաչատուր Զուղայեցի ՌՃԴ. Գաբրիէլ սարկաւագ ՌՃԱ, եւ այլն, բազմաթիւ հայ անուններ եւ թուականներ։ Անշուշտ հայ վաճառականներ, որոնք յարաբերութեան մէջ են եղել Վենետիկի հետ, իրանց գործերը վերջացնելուց յետոյ նստել են այս սիւների տակ եւ, մի տրխուր անմահութիւն ձեռք բերելու համար, դանակով, մեխով, երկաթի կտորով փորագրել են իրանց անունները այս գեղեցիկ սիւների վրա. բայց թէ իշխանութիւնն ինչպէս է թոյլ տուել այդ կատարեալ վանդալութիւնը՝ չը գիտեմ. գուցէ դէպի հայերը մի առանձին ներողամիտ վերաբերմունք է եղել այստեղ։ Պատմում են, օրինակ, որ հայ վաճառականները «չիտակ» արտոնութիւն են ունեցել արեւելքի բոլոր վաճառականների մէջ եւ ահա թէ ինչու։

Վենետիկցի մի ազնուական մի անգամ գտնում է հայ վաճառականից մի թանգագին կերպաս. հայը, արեւելքի սովորութեան համեմատ, կրկնակի գին է ասում իր ապրանքին, յուսալով, որ գնողը կը վիճի, բազար կանի եւ ի վերջոյ կը յանգեն իսկական գնին։ Բայց հպարտ ազնուականը վճարում է առաջին գինը եւ վերցնում կերպասը հեռանում, թողնելով վաճառականին զարմանքի եւ խղճահարութեան ենթակայ։ Այն ժամանակ հայը վազում հասնում է վենետիկցուն, բացատրում է իր սխալը եւ խնդրում է յետ վերցնել աւելորդ դրամը. ազնուականը գովում է նրա վարմունքը, բայց չի ընդունում դրամը, այլ թողնում է, իբր ընծայ նրա շիտակութեան համար։ Ահա այս դէպքն է, որ իբր թէ առիթ է դառնում հայերի շիտակութեան հռչակին։

Ճշմարտութիւն է այս, թէ անէկդոտ, չը գիտեմ, բայց ցանկալի է, որ իւրաքանչիւր հայ վաճառական երբէք չը մոռանայ, որ մի հատիկ դէպքն անգամ բաւական է օտար երկրում մի ամբողջ ժողովրդի վարկը բարձրացնելու կամ ցեխին հաւասարացնելու համար։

Ա. Ահարոնեանց

«Новости» ասում է, որ անհիմն է այն լուրը, իբր թէ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ենթակայ տարրական դպրոցները մտադրութիւն կայ ստորադրել հոգեւոր թեմական իշխանութիւններին։ Այդպիսի հարց ամենեւին չէ էլ ծագել։

—

«Рус. Вѣд.» հաղորդում է, որ Պետերբուրգի այն ընկերութիւնը, որ օգնում էր չքաւորներին եւ հիւանդներին՝ գրքեր կարդալով նրանց համար, դադարեցրել է իր գոյութիւնը։

—

Մայրաքաղաքների լրագիրների ասելով, կանանց բարձրագոյն կրթութեան բէֆօրմների հարցը այս տարի չի քննվի ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ, այլ կը մնայ եկող տարվան։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Տաւարի ժանտախտը քաղաքում վաղուց վերջացել է, եւ այս քանի օրերս կարանտինը կը վերացվի եւ քաղաքը կազատվի ներկայ նեղ վիճակից։ Բայց Ալատան, Մերենիա եւ Խումբիս գիւղերում հիւանդութիւնը դեռ շարունակվում է։ Ժանտախտը առանձնապէս սաստիկ կոտորածներ է անում Խումբիսում, ուր գտնվում են Մերենիայի եւ այլ գիւղերի ամառանոց տարած նախիրները։ Հիւանդութիւնը Խումբիսում տարածվել է հէնց Մերենիայից։ Ժանտախտի պատճառով քաղաքային դպրոցի ֆիրմայի կովերը այս ամառ չուղարկվեցին Խումբիսի մօտ գտնվող դպրոցապատկան ամարային արօտատեղերը»։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են. «Կիրակի, յունիսի 24-ին, պատարագից յետոյ եկեղեցում հանդիսաւոր կերպով կատարվեց հոգեհանգիստ տաղանդաւոր ողբերգու Պետրոս Ադամեանի մահվան տասնամեակի առիթով։ Ցաւելով պէտք է յայտնենք, որ ժողովուրդ շատ չը կար, չը նայելով որ մի շաբաթ առաջ այդ մասին ծանուցումն եղած էր. մի անձն միայն ներկայ էր հոգեհանգստին հայ դերասանների ներկայացուցիչներից։ Հոգեհանգստի ժամանակ պ. Ղուկաս Քեմեչէճի ճառ կարդաց, որի մէջ ազդու խօսքերով յայտնեց Ադամեանի գործունէութեան նշանակութիւնը հայկական բեմի համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վիէննայից «Новое Время»-ին հեռագրում են, թէ աւստրիական ոստիկանութիւնը Վիէննայից արտաքսել է գեներալ Բիտտիխին, պաւօնական կլուբում արտասանած ճառի պատճառով։ Այդ է պատճառը, որ գեներալ Բիտտիխ իր չնորհակալութիւնը չեխերին արտայայտեց բաց նամակով (այդ նամակի բովանդակութիւնը հաղորդել է արդէն «Ռուսաց հեռագրական գործակալութիւնը»)։

—«Presse» հաղորդում է, որ ֆրանսիական պատգամաւոր Գօտրէ մտցրել է ֆրանսիական պարլամենտը մի օրինագիծ, որով առաջարկում է պարլամէնտական ներկայացուցչութեան մէջ նոյն իրաւունքները տալ կանանց, ինչ որ վայելում են այժմ տղամարդիկ։

—Միւնխէնի «Allgemeine Ztg.» լրագրին Հռոմից հեռագրում են, որ իտալական թագաւորը եւ թագուհին հոկտեմբերի 4-ին կը ժամանեն Պետերբուրգ, Բերլինի վրայով։

—Հռոմից «Temps»-ին հաղորդում են, որ նորերս պապը, Լապոնի բժշկի թոյլտուութեամբ, իր սենեակներից իջաւ զբօսնելու Վատիկանի պարտէզը։ Երկու տարի է արդէն, որ պապը չէր դուրս գալիս իր սենեակներից։ Հետեւաբար այժմ նրա առողջութիւնը շատ լաւ է։

—Կ. Պոլսի չերնօգօրական դեսպան Բանիչ նորերս Բ. Դռան ուշադրութիւնը դարձրեց թիւրք-չերնօգօրական սահմանագծում վերջերս տեղի ունեցած միջնադէպերի վրա, մատնացոյց անելով այն լուրջ դրութիւնը, որ ստեղծվում է այդպիսի ընդհարումների չնորհիւ։

—Ժանտախտի նոր դէպքը սաստիկ յուզմունք է առաջացրել Կ. Պոլսում։ Ամենախիստ միջոցներ են ձեռք առնված, եւ սանիտարական խորհուրդը վճռել է, որ քաղաքից հեռացող անձինք նախապէս ենթարկվեն բժշկական քննութեան։ Այդ կարգադրութիւնը սաստիկ տրտունջ է զարթեցնում։

—«Polit. Correspond.» թերթին Կ. Պոլսից գրում են, որ Բաղդադի երկաթուղու կօնվէնցիայի ծրագիրը յանձնված է այժմ քննելու զինուորական յանձնաժողովին, որ իր եզրակացութիւնը պէտք է ներկայացնէ սուլթանին։

—«Новости»-ին հեռագրում են Լօնդոնից, թէ Բօտա կոչ է հրատարակել, որի մէջ ասված է, թէ անհնար է խաղաղութեան դաշն կապել, եթէ չը պահպանվի հարաւ-աֆրիկական հանրապետութիւնների անկախութիւնը։

—Կ. Պոլսից «Hamburg. Nachr.» լրագրին հեռագրում են, թէ Բ. Դուռը մտադիր է մի յանձնաժողով նշանակել, որ կը զբաղվի Մակեդոնիայում մտցնվելիք բէֆօրմների հարցով եւ կը քննի արդէն առաջարկված ծրագիրները։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Մի անգամ գնում էի լեռները յատուկ յանձնարարութեամբ։

Ճանապարհը երկար էր եւ դժուար։ Ցողնել էինք թէ ես եւ թէ իմ ձիատէրը։ Պէտք էր մի տեղ հանգիստ առնել։

Մեր ճանապարհի վրա էր Կ. գիւղը։

—Իջնենք գիւղում, առաջարկեց ձիատէրս։

Ես համաձայնվեցի։

—Ես ասում եմ Դանիէլի մօտ իջնենք, նա միշտ տանն է, դիմեց ինձ ձիատէրս։

—Ո՞վ է Դանիէլը, հարցրի ես։

—Դա մի պատուաւոր ծերունի է։ Նա այլ եւս դաշտ չէ դուրս գալիս։ Ցայտնի մարդ է։ Մի՞թէ լսել չէք։

—Չեմ լսել, պատասխանեցի ես։ Ինչո՞վ է սակայն նա յայտնի։

—Այս գիւղի աղբիւրը նա է շինել իր հաշւով, բացատրեց ձիատէրը։ Դանիէլը հիւրասէր մարդ է։

—Իջնենք, վրա բերեցի ես։

Հիւրասէր խօսքը փոքր ինչ օտարոտի էր, որովհետեւ գիւղը շատ խուլ տեղում էր եւ հազիւ թէ տարին մէկ երկու հիւր պատահեն այս գիւղում։ Սակայն մտաբերեցի, որ մէկերկու դէպքի համար էլ սիրալիր ընդունող եւ պատասխանող է հարկաւոր։

Շուտով հասանք Կ. գիւղը։ Ձիատէրը ցոյց տուեց ինձ աղբիւրը։ Դա մի փոքր աղբիւր էր քարուկրով շինված, գեղեցիկ ծորակով։ Աղբիւրի առաջ դրված էին երեք նաւեր՝ լիքը ջրով, գիւղի անասուններին ջուր տալու համար։

Ջուրը պարզ էր, վճիտ, սառ եւ համեղ։

Ճանապարհի յոգնածութիւնից եւ չոգից ինձ կրկնակի համեղ թուաց այդ ջուրը։

Դանիէլին գտանք տանը։ Նա մեզ ընդունեց սիրալիր կերպով։ Դանիէլը շատ հասարակ եւ հաճեստ մի մարդ էր։

—Տեսանք ձեր շինած աղբիւրը, լաւ ջուր ունի, ասացի ես։

—Աղբիւրը հին է, ես միայն նրան բարեկարգեցի, ասաց նա։ Աղբիւրը ընկած էր մի փոսի մէջ եւ շատ դժուար էր այնտեղից ջուր վերցնելը, իսկ տաւարը այդ աղբիւրից չէր խմում։ Տաւարը ուղարկում էինք ձորի տակը, որտեղ մեր աղբիւրի բարակ ջուրը խառնվում էր մի ուրիշ ջրի հետ։ Նեղութիւն շատ էինք քաշում։

—Լաւ, մի՞թէ դժուար էր աղբիւր շինել, հետաքրքրվեցի ես։

—Ի հարկէ, դժուար չէր. բայց ոչ ոք չէր ուզում ծախք անել։

—Կարելի էր ամբողջ գիւղով։

—Ի հարկէ, կարելի էր. բայց չէին անում։ Միշտ խօսում, միշտ գանգատվում էին եւ յետոյ էսօր-էգուցվայ գցում։

—Վերջապէս դուք շինեցիք, բացականչեցի ես ժպտալով։

—Այդպէս եղաւ, կամացուկ չչնջաց ծերունին։ Ուխտի բան էր, կատարեցի։

—Ի՞նչ ուխտի, հետաքրքրվեցի ես։

—Մի անգամ, պատմեց ծերունին, ես մեր հին աղբիւրի մօտ սայթաքեցի եւ վայր ընկայ. բոլոր չորերս ցեխոտեցի ու ինքս էլ փոքր ինչ վնասվեցի։ Այդ ժամանակից իմ մտքումը ուխտեցի, որ մի բան անեմ։ Հարկաւոր էր ընդամենը յիսուն րուբլի։ Այդ էլ գտայ, երբ մեր քուռակը մեծացաւ եւ նրա մօրը ծախեցի լաւ գնով։

—Տանեցիներդ չարգելեցին, հարցրի ես։

—Արգելում էին. բայց նրանց ասացի, որ ուխտ եմ արել։ Ցիսուն րուբլին գիւղում մեծ փող է, այն էլ մեր գիւղի նման յետ ընկած տեղում։ Իսկ հիմի իմ տանեցիներն էլ ուրիշ են։ Որքան լինի՝ գիւղի օրհնութիւնը մեր տան վրա է։ Քանմէկ տարի է, որ աղբիւրը շինված է։

—Իսկ միւս գիւղացիները, մի՞թէ չօգնեցին, հարցրի ես։

—Ոչ. աղբիւրը ես երկու նաւը ես շինեցի։ Մի քանի տարուց յետոյ նրանք աւելացրին մեծ նաւը եւ նորոգում են, երբ փչանում են նաւերը։

Այդպէս շինվել է գիւղի աղբիւրը։ Այժմ գիւղացիները հեշտութեամբ ջուր են վերցնում աղբիւրից. իսկ նրանց անասունները խմում են նաւերից եւ այլ եւս ստիպված չեն ամբողջ մի վերստ ձորը իջնել եւ դժուարութեամբ վերադառնալ։

—

Ի՞նչ բան է մի փոքրիկ աղբիւր։

Ընդհանուր գործերի շրջանում, մի որոշ տեսակէտից, դա անկա՛ կած մի շատ փոքրիկ բան է. բայց գիւղական կեանքում այդպիսի փոքրիկ բաները դեր են կատարում եւ յաճախ կարեւոր դեր։

Ծանօթանալով գիւղական կարիքների հետ, դուք կարող էիք համաձակ բացականչել.

—Ափսոս, որ քիչ են կեանքի մէջ այդպիսի մանր բաներ։

Գնացէք մեր գաւառները, պտտեցէք մեր գիւղերը եւ տեսէք, թէ որքան ըստ երեւոյթին մանր մունր, բայց գիւղերի համար էական գործեր սպասում են օգնողների, աջակցողների եւ իրագործողների։

Ձը կան դրանք։

Կամ շատ սակաւաթիւ են։

Այդ է պատճառը, որ երբ մէկ-մէկ դուրս են գալիս նախաձեռնողներ, նրանք հազուադիւտ, մատով ցոյց տալու անձնաւորութիւններ են հանդիսանում։ Դրանք էլ մէկ-մէկ Դանիէլներ են։

Դուք լաւ գիտէք, որ այս գիւղը վաղուց կարօտութիւն ունի մի լաւ կամուրջի։ Ահա մի ուրիշ գիւղ, որի առաջ ընկած է մի ձոր անտանելի ճանապարհներով։ Ահա մի երրորդը, որի եկեղեցին քայքայվելու վրա է։ Ահա չորրորդը, հինգերորդը՝ ուրիշ էական կարիքներով։

Այդ գիւղերը տարիներով, տասնեակ տարիներով տանում են զրկանքներ եւ անյարմարութիւններ, սպասելով, որ մի օր դուրս կը գայ մի բարերար, կամ մի խելագար եւ կօգնէ գիւղին։

Տասնեակ տարիներ ոչ ոք չէ երեւում. բայց բաղդի բերմամբ պատահում է, որ եւ երեւում են։

—

Մի թարմ օրինակ։

Մենք գանվում ենք մեր երկրի խուլ անկիւններից մէկում, Զանգեզուրի գաւառի Զափնի գիւղում։

Այդ գիւղի եկեղեցին հասել է անտանելի դրութեան։ Գիւղացիները հէնց որ հաւաքվում են միասին, մշտական խօսակցութեան առարկաներից մէկը իրանց եկեղեցին է։

—Շատ է քայքայվել, ասում է մէկը։

—Հա, բոլորովին խարխուլ է դարձել, նկատում է միւսը։

—Պէտք է բոլորովին քանդել եւ նորը կանգնեցնել նրա տեղը, կտրական ձեւով յայտնում է երրորդը։

—Պէտք է չտապել, որպէս զի մի օր եկեղեցու փլատակների տակ չը մնանք, յորդորում է չորրորդը։

—Պէտք է ժողովարարութիւն անել։

—Պէտք է, պէտք է։

—Պէտք է, պէտք է։

Այսպէս խօսում են ամեն շաբաթ, ամեն ամիս, շարունակ տարիների ընթացքում։

Եկեղեցին չէ շինվում եւ օրէցօր աւելի ու աւելի քայքայվում է. իսկ «պէտք է, պէտք է»-ն անդադար կրկնվում է։

Ոչ ոք չէ ուզում գործի ձեռնարկել, նուիրատուութեան առաջին օրինակը դառնալ, ժողովարարութիւն կազմակերպել։

Որ դժուար չէ գործ սկսել եւ առաջ տանել, այդ երեւում է հետեւեալից։

Զատկի տօներին հիւր եկաւ Զափնի գիւղը հարեւան Շիրվենանց գիւղից մի երիտասարդ Ա. Գասպարեանց, որ նոր էր վերադարձել Բալախանից։ Նա տեսնում է քայքայված եկեղեցին եւ լսում է գանգատներ նրա վիճակի մասին։

—Ինչո՞ւ չէք վերանորոգում, հարցնում է նա։

—Մենք էլ ենք մտածում, բայց գործը գլուխ չէ գալիս, պատասխանում են չափնեցիները։

Գանգատը ընդհանուր է, սակայն ոչ ոք չէ ուզում գործնական կերպով մօտենալ խնդրին։

Երիտասարդը վճռում է մի կտրական քայլ անել։ Նա իր բարեկամի տանը հաղկերոյթ պատրաստել տուեց եւ հրաւիրեց գիւղի ձեռնհաս մարդկանց։

Հաղկերոյթի միջոցին Գասպարեանցը դիմեց գիւղացիներին յորդորական մի ճառով եւ յայտնեց, որ գիւղացիները պէտք է անյապաղ ձեռնարկեն եկեղեցու վերանորոգութեան գործին։

—Լաւ ես ասում, պատասխանեցին նրան։

—Եթէ լաւ եմ ասում, իսկոյն սկիզբ դնենք ժողովարարութեան, յորդորեց Գասպարեանցը։

—Թող սկսող լինի, մենք էլ յետ չենք մնալ, հանգստացրին նրան հիւրերը։

—Ահա, ես թէեւ օտար եմ, ձեր գիւղիցը չեմ, բայց տալիս եմ իմ կողմից այդ գործի համար 60 բուբլի։

Այդ նուէրը անսպասելի էր եւ գիւղական տեսակէտից շատ խոշոր։

Նա գործեց իր տպաւորութիւնը։

—Ես էլ տալիս եմ 30 բուբլի, վեր բարձրացաւ հիւրերից մէկը՝ Գ. Ղազարեանց։

—Ես էլ 25 բուբլի, յայտնեց Ա. Տէր-Մարգարեանցը։

Միւսները հետեւեցին նրանց օրինակին Հ. Տէր-Մարգարեանց եւ Բ. Մարտիրոսեանց խոստացան 20-ական, Ն. եւ Մ. Տէր-Մարգարեանցներ 15-ական բուբլի։

—Պարոններ, ես էլ իմ բաժինը կաւելացնեմ, ասաց գիւղի թուրք անտառապահ Հիւսէյն բէգը։

Գիւղացիները զգացվեցին։

—Ձեր գործը լաւ գործ է, ես էլ իմ կողմից տալիս եմ 5 բուբլի։

Գիւղացիները յայտնեցին իրանց չնորհակալութիւնը։

Գործը սկսվեց եւ ժողովարարութիւնը շարունակվում է։

Պէտք է միայն նախաձեռնել, միայն ընթացք տալ։

—

Որքան օգուտներ կարող էինք տալ մենք մեր գիւղերին մեր նախաձեռնութեամբ, աշխատանքի կազմակերպութեամբ։

Բայց դուք չէք ուզում գիւղում տարիներ շարունակ նստել եւ գործել։ Գոնէ օգնեցէք տեղական կարիքներին բաւարարութիւն տալու։

Մի քանի հարիւր, իսկ յաճախ մի քանի տասնեակ բուբլիներով դուք կարող էք նպաստել շատ գործերի առաջ գնալուն։

Ի՞նչ մի դժուար բան է գիւղերին նուիրել գրքեր, ուղարկել լրագրի մի համարը մի քանի տարիների ընթացքում, մինչեւ որ գիւղը ինքը ընտելանայ ընթերցանութեան եւ դարձնէ նը-րան իր համար անհրաժեշտ պահանջ։

Ինչո՞ւ չէք ընծայի գիւղին մի կատարելագործված մեքենայ, մի գութան, մի ցաքան, մի զտիչ մեքենայ, մի յարմար ճախարակ։ Ինչո՞ւ չէք բաժանի գիւղերին ընտիր տեսակի սերմացուներ, ազնիւ տեսակի կենդանիներ։ Ինչո՞ւ չէք անցկացնի գիւղի համար առուներ՝ ջուր բերելու եւ հողերը ոռոգելու համար։

Գիւղացին պատրաստ է նաեւ փոխարինաբար ընդունելու ձեր արածները եւ ձեզ վերադարձնելու ձեր ծախքերը, բայց ապացուցէք, որ դուք նրան օգտաւէտ բաներ էք տալիս, որ դուք նրա բարեկամն էք իսկապէս։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացված նամակներում մենք նկատել ենք չնորհակալութեան արտայայտութիւններ շատ մանր մունր օգնութիւնների մասին եւ շատ անգամ տեղ ենք տուել նրանց գաւառական լուրերի բաժնում։ Այդ արել ենք խրախուսանքի համար։ Վ. Աղդան գիւղ, կամ մի Սեւանայ վանք ստացել են մի քանի կտոր գրքեր, կամ լրագրի օրինակներ, մի Քարվանսարայ գիւղ, որտեղ աղքատներին օգնել է Զատկի տօներին Ս. Ցովակիմեանց 20 բուբլու արժողութեամբ բաժիններ հանելով, մի Մանգլիս, ուր տեղական ունեւորները օգնել են իրանց չքաւորներին, եւ ուրիշ գիւղեր ու աւաններ՝ իրանց պարտքն են համարում յայտնել իրանց երախտագիտութեան զգացմունքները դէպի նուիրատուները եւ օգնողները։

Սակայն ժամանակն է, որ այդ առ այժմ հազուագիւտ եւ բացառիկ դէպքերը դառնային սովորական եւ հանդիսանային իբրեւ մեր կեանքի կանոնաւոր արտայայտութիւն։

Հրատարակել եւ պարբերական մամուլի մէջ արձանագրել ամեն մի մանր բարեգործութիւն —անկարելի է եւ աւելորդ է։

Սովորենք նայել բարի գործի վրա, իբրեւ պարտաւորութեան եւ սովորութեան վրա։

Վրթին

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

29 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունիսի 28-ին արտասահման ուղեւորվեց Մէկլէնբուրգ-Շվէրինեան մեծ դուքս Ֆրիդրիխ Ֆրանց IV։

«Օրէնսդրութիւնների Ժողովածու»-ի մէջ հրատարակված է, որ, իբրեւ ժամանակաւոր կարգադրութիւն, թոյլ է տրված անմաքս ներմուծել արտասահմանից ամեն տեսակ գործիքներ եւ ապարատներ գիւղատնտեսութեան համար ՀԱՅԱԿԱՐ կենդանիներին ոչնչացնելու նպատակով։

ՕԴԷՍԱ։ Տենդրեան ծոցից այստեղ հասաւ Ռեւ ծովի պրակտիկական նաւատորմը. նաւատորմը կը մնայ այստեղ մօտ մի շաբաթ։

ԼՕՆԴՕՆ։ Կիպչէնէր հաղորդում է Պրէտորիայից. «Դրէնինգէնից դէպի հիւսիս-արեւմուտք, Գուտկօպի մօտ գտնվող հարաւ-աֆրիկական ոստիկանական զօրքերի պահականոցները յարձակման ենթարկվեցին. բօէրները խլեցին մի հին եօթֆունտանոց թնդանօթ, բայց յետոյ յետ մղվեցին. մեզնից երեք հոգի սպանվել են եւ եօթը վիրաւորվել։

Զէերուստից դէպի արեւելք Մէտուէնի մօտ տեղի ունեցած ճակատամարտում երեք բօէրներ սպանվել են եւ 43 հոգի գերի վերցվել. մեզ աւար մնացին ռազմամթերքներ եւ անասուններ. մեր մեջից երկուսը վիրաւորվել են»։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Գերմանչտադտացի մի ձիավաճառ անգլիական կառավարութիւնից յանձնարարութիւն է ստացել ամենակարճ ժամանակում 2,000 ձի հայթայթել հարաւային Աֆրիկայի համար։

ՎԻԷՆՆԱ։ Այստեղ քննվող այն գործում, որով տեղական բանկիր Ֆոգլը մեղադրվում էր, որ զանազան խարդախութիւններով իւրացրել է ռուսահպատակ Տայբինի գոյքը, երդուեալ դատաւորները բացասական պատասխան տուին բոլոր մեղադրական հարցերին եւ արդարացրին Ֆոգլին։

ԿԻԵՎ։ Բաֆինադ շաքարի պահանջը աւելացել է. վաճառանոցի տրամադրութիւնը պինդ է. բօրսայում խօսում են, որ յուլիսի 1-ից բաֆինադի գինը կը բարձրանայ 10 կոպէկով։ Բաֆինադի պաչարից վաճառումը աննշան է. շաքարաւազի պահանջը միջակ է. առուծախները կատարվել են սահմանների մօտ գնե-

բով։ Ֆաստովեան գծի շրջանում ճակնդեղի մնկարաններում որդ է երեւացել, նոյնպէս եւ թրթուռ, որոնք կարեւոր վնասներ են հասցնում։

ՏԻՄԷՆ։ Սիբիրի հունձի մասին անմխիթար տեղեկութիւններ են ստացվում։ Հացահատիկների գները ամեն տեղ բարձրանում են։

ԲԱԳՈՒ։ Բագուի նահանգի բոլոր գաւառներում հունձը սկսվել է։ Բերքը ստացվում է հերվանից պակաս, բայի Ղուբայի գաւառից, ուր, գարնանային անձրեւների շնորհիւ, հունձը լաւ է։

Կ. ՊՕԼԻՍ։ Ռուսաց դեսպանի մի քանի անգամ կրկնված առաջադրութիւնների շնորհիւ, Սօլունում յատուկ յանձնաժողով է նշանակվում Սօլունի վիլայէթում ժանդարմական պաշտօնէութիւնը բարեփոխելու համար։

ԷՎԿՍԻՆՕԳՐԱԴ։ Յունիսի 28-ին, ռուսաց «Ռօստիսլավ» զրահակրի վրա հոգեհանգիստ կատարվեց Թագաժառանգ Գէօրգիյ Ալէքսանդրովիչի համար ի յիշատակ մահվան օրվայ։ Յետոյ ճաշ տրվեց, որին, բացի Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչից եւ Ֆէրդինանդ Իշխանից, ներկայ էին սինիատրները, Ֆէրդինանդ Իշխանի շքախումբը եւ Վառնայի ականաւոր քաղաքացիներ։ Մեծ Իշխանը թաս առաջարկեց Ֆերդինանդի եւ բոլգարական զօրքի կենացը։ Ֆերդինանդ Իշխանը, ի պատասխան, թաս առաջարկեց ռուսաց կայսրի եւ ռուսաց զօրքի կենացը։

ԼՕՆԴՕՆ։ «Times»-ին Շանղհայից հաղորդում են, որ այնտեղ յաւառ լուր է պտտում, իբր թէ պրինց Տուան մեծ զօրքով առաջ է խաղում Շանսի նահանգի ուղղութեամբ եւ իբր թէ գահաժառանգը ժամանել է նրա մօտ, որ կարող էր տեղի ունենալ միմիայն կայսրուհի-խնամակալուհու գիտութեամբ եւ հաւանութեամբ։

Սիմլայից հաղորդում են «Times»-ին, որ Հնդկաստանում այժմ ամեն տեղ սկսվել է մուսսօնը։ Գանգէսի հովտի արեւմտեան մասում յորդ անձրեւ տեղաց, որ սաստիկ անհրաժեշտ էր։

ՁԻԿԱԳՕ։ Երաշտից բռնված նահանգներում դեռ անձրեւ չը կայ. երկարատեւ եւ յաւառ չոգերը լուրջ կերպով վնասել են, եթէ բոլորովին չեն փչացրել, եգիպտացորենը եւ. պըտուղները Միացեալ-Նահանգների շրջաններից շատերում։

ԼՕՆԴՕՆ։ «Times»-ին հաղորդում են Սիմլայից, թէ հնդկական կառավարութիւնը՝ ռուսաց գիտնական արշաւախմբին, որ գնում է դէպի Գամիր Ֆեդչենկո պրոֆէսորի ղեկավարութեամբ, թոյլ է տուել գնալ Հնդկաստան կամ Կիլիկեան լեռնացքով դամ Գիլգիտեան հովիտով, կամ թէ Եարկենդ գետի ափով Լեխի վրայով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իր ատեանում ներկայ տարվայ յուլիսի 3-ին, ցերեկվայ ժամը 1-ին, նշանակված է աճուրդ կապալով տալու բէտոնի կոյուղի շինելու գործը. հատ. 0,365×0,25 պզդ. սաժ. երկարութեամբ 30,00 պ. սաժ. եւ հատ. 0,25×0,16 պ. ս., երկար. 77,00 պ. ս. Աւճալեան փողոցում եղածից Աւճալեան պերեուլոկի կի եւ Մինկվիցեվսկայա փողոցի վրայով։ Աճուրդին մասնակցել ցանկացողները պայմանները կարող են տեսնել Վարչութեան շինարարական բաժնում, բոլոր լի օրերը, առաւօտեան ժամը 9-ից մինչեւ ցերեկվայ ժամը 2-ը։ 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իր ատեանում յուլիսի 2-ին, ցերեկվայ ժամը 1-ին, նշանակված է աճուրդ կապալով տալու Օրլովսկայա փողոցը կանոնաւորելու եւ քարելու եւ նոյնպէս յենապատ շինելու գործը, 3,255 բուբլի 35 կոպ. գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները պայմանները կարող են տեսնել վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը, առաւօտեան 9 ժամից մինչեւ ցերեկվայ ժամը 2-ը։ 2—3

ԱԽՎԵՐԴԵԱՆ ԳԷՈՐԳԻ

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅ

աշխատասիրութիւնը, 172 երես

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Ծախվում է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում։ (Կ.) 1—10

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ԳԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԳԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՑՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԻԱԶԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՊՐԷՑՍԿՈՒՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԹԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкалное депо Б. М. Мириманіана,
ТИФЛИСЪ.
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(կիր.)

ԴԻՊՈՒԱԾՈՎ

էժան ծախվում է Բաթում քաղաքում, քաղաքային այգու մօտ մի առանձնացած տուն 180 քառ. սաժ. հողաբաժնով։ Դոկումենտներն անվիճելի են։ Պայմանների համար դիմել Բաթում, տանտիրոջը, աւագ քահանայ Ալ. Բալցեվիչին։ 3—3

ՆՈՒԽԻ ՔԱՂԱՔՈՒՄ

ՏՐՎՈՒՄ Է ԿԱՊԱԼՈՎ

Մետաքսե գործարան

իր բոլոր պարագաներով, շինութիւններով, մեքենաներով եւ շարժական կայքով։ Պայմանների մասին դիմել Ց. Մ. Միրզոյեանի ժառանգների գրասենեակը Զաւչաւադեվսկայա փողոցի վրա, սեփական տան մէջ։

(Հ. Կ.) 2—2

Կիրակի, յուլիսի 1-ին,

ՎԷՏՑԷԼԻ ԹԱՏՐՕՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Ս. ԴԷՄՈՒՐԵԱՆ

կը տայ

ՀԱՄԵՐԳ

մասնակցութեամբ սօլիստների եւ նորակազմ խմբի։

Սկիզբն է 8½ ժամին։ 1—1

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ՍԱԹԱՐՈՒՆՈՒ

աշխատութիւններից ձեռք բերելու համար՝ այսուհետեւ պէտք է դիմեն. Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенберъ“ (Лорисъ Меликовская, № 11), Г. Галустяну. Նոյն տեղը վաճառվում են զանազան գրքեր։ Ամեն մի նոր լոյս տեսած գիրք ցանկացողներին կարող ենք ուղարկել։ 8—10

ԳՈՒՏՏԻՆԲԻՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ, բժ. Վ. Արծրունու . . . . . 75 կ.
ՎԱՏ ՅԱՒ » » » . . . . . 6 »

Շուտով լոյս կը տեսնի «Մի խմիր», երկրորդ տպագրութիւն։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. Галустяну. 2—10

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XII շրջան

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան»

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբաշխատելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերօսինի գործարանական հաշուետուութեան։
Բ) Առևտրական թուաբանութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Առևտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։
Ե) Դեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1901 թվի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՒՍ ամսից յետոյ։

ԻԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՐՈՒԲԼԻ

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ (Կ.) 2—25

(Հ. 19, յուլ. 9, 20, 30)

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Іюня 1901 г. Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.